ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ

(Վ. Ի. Լենինի ծննդյան 95-ամյակի առթիվ)

Մ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Համաշխարհային պատմության ամեն մի շրջադարձային ժամանակաշրջան մտքի ու գործունեության հսկաներ, բազմակողմանի հանճարներ է ծնում։ Պատմական տեսակետից առավել խոշոր դեր խաղացող գործիչներ ծնեց կոմունիստական հասարակարգի ծագման ու հաստատման դարաշրջանը։ Բանվոր դասակարգի ազատագրական պայքարը կյանքի կոչեց հասարակության զարգացման օրինաչափությունները տեսականորեն ընդհանրացնող փայլուն գիտնականների, անվեհեր հեղափոխականների ու նոր հասարակարգի կառուցման տաղանդավոր ղեկավարների։ Կարլ Մարքսը, Ֆրիդրիխ Էնգելսը և Վլադիմիր Լենինը այդ շարժման ամենարարձր գագաթներն են, այն գործիչները, որոնք իրենց մեջ երջանկորեն միավորում են հանճարեղ փիլիսոփայի, տնտեսագետի, քաղաքագետի և միաժամանակ հասարակական-սոցիալական շարժման տաղանդավոր կազմակերպչի ու ղեկավարի հատկությունները։ Նրանք և՝ հեղափոխական շարժման գործնական ղեկավարներ էին, և՝ էնցիկլոպեդիկ մտածողներ, մտքի և գործողության տիտաններ։

Լենինը Մարքսի և Էնգելսի մեծ գործի հանճարեղ շարունակողն էր, նրանց ուսմունքը նոր, ավելի բարձր աստիճանի բարձրացնողը, որն ապրեց ու գործեց մարքսիստական գաղափարների անմիջական կենսագործման դարաշրջանում։ Նա գլխավորեց նոր տիպի ինտերնացիոնալիստական մարքսիստական կուսակցության կազմակերպման գործը, նրա իմաստուն ղեկավարությամբ հաղթանակի հասավ համաշխարհային պատմության համար վիթխարի շրջադարձային նշանակություն ունեցող Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, ստեղծվեց բանվոր դասակարգի դիկտատուրան և սկսվեց կոմունիստական հասարակության գործնական կառուցումը։ Նրա ղեկավարությամբ կոմունիզմը ձգտումից ու թեորիայից սկսեց վերածվել իրականության։

Անգնահատելի է Լենինի՝ որպես կոմունիստական շարժման գործնական ղեկավարի, դերը։ Անկասկած, սոցիալական հեղաշրջումը պատմական զարգացման օրինաչափ ընթացքի և տարբեր երկրների զարգացման կոնկրետ իրավիճակի անխուսափելի հետևանքն է։ Սակայն պատմական անհրաժեշտությունը, հասունանալով, հնարավորությունից իրականության է վերածվում միայն այն ժամանակ, երբ գիտակցվում է լայն զանգվածների կողմից, երբ այդ զանգվածները բարձրանում են կազմակերպված, նպատակասլաց գործողությունների և երբ նրանց միջից առաջ են քաշվում՝ շարժման բուն էությունը, նրա հիմնական ուղղությունն ու ընթացքը գիտականորեն իմաստավորելու, այն հմտորեն ղեկավարելու ընդունակ անհատները։

Քսաներորդ դարի սկզբին հենց այդպիսին եղավ Լենինի գործունեությունը, որն անհատական կերպարանք տվեց ոչ միայն մեկ երկրում՝ Ռուսաստա-

նում ծավալվող պրոլետարական շարժման, այլև կապիտալիզմից կոմունիզմին անցման ամբողջ դարաշրջանին։

Այդ համաշխարհային-պատմական դերը պայմանավորված է ոչ միայն Լենինի պրակտիկ գործունեությամբ, այլև մարքսիստական տեսության մեջ նրա մուծած հսկայական ավանդով։ Պրակտիկ գործունեությունը, որքան էլ այն հատկանշող և կարևոր լինի, որքան էլ այս կամ այն պատմական իրադրությունների հանճարեղ վերլուծություն և հնարավոր լավագույն լուծումներ պարունակի, վերջ ի վերջո, նշանակություն ունի դեպքերի տվյալ ընթացքի համար միայն, տվյալ կոնկրետ կապակցությունների ու հանգամանքների մեջ։ Սակայն դա այդպես է լոկ այն դեպքում, երբ տվյալ պատմական անձնավորությունը բավարարվում է միայն պրակտիկ գործունեությամբ։ Իսկ Լենինի իրական մեծությունը բնութագրվում է անմիջական պրակտիկ գործունեության և համաշխարհային զարգացման իր ապրած ժամանակաշրջանի տեսական խոր ընդհանրացման անխզելի միասնությամբ։

Լենինը մեր դարաշրջանի մեծագույն տեսաբանն էր, անկրկնելի մտածող։ Նա կարողացավ գիտականորեն ընդհանրացնել կապիտալիզմից կոմունիզմին անցման համաշխարհային պրոցեսի հիմնական օրինաչափությունները, ուրվագծել այդ անցման հնարավոր ուղիները, հարստացնել մարքսիզմը նոր կողմերով, նոր դրույթներով և այն հասցնել մի այնպիսի նոր աստիճանի, որ իրավամբ կոչվում է մարքսիզմ-լենինիզմ։

Հասարակության զարգացման մասին գիտության մեջ Լենինի խոշորագույն ավանդը XIX դարի վերջի և XX դարի սկզբի համաշխարհային տնտեսական ու քաղաքական զարգացման օրինաչափությունների գիտական խոր հետազոտությունն է։ Սկսելով Ռուսաստանում արդյունաբերական ու ագրարային հարաբերությունների խորազնին ուսումնասիրությունից, նա վերլուծեց կապիտալիզմի զարգացման ուղիներն ու հեռանկարները այդ երկրում և, այնուհետև, հետազոտելով համաշխարհային կապիտալիզմի զարգացման տվյալները ու հիմնական տենդենցները, բացահայտեց կապիտալիզմի բարձրագույն ստադիայի՝ իմպերիալիզմի տնտեսական ու քաղաքական զարգացման օրինաչափությունները։ Հայտնագործելով իմպերիալիզմի ժամանակ կապիտալիզմի անհավասարաչափ, թռիչքաձև զարգացման օրենքը, նա հանգեց այն եզրակացության, որ իմպերիալիզմի դարաշրջանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակը հնարավոր է ոչ թե բոլոր զարգացած կապիտալիստական երկրներում միաժամանակ, այլ սկզբնապես մի քանի կամ նույնիսկ մեկ առանձին խոշոր կապիտալիստական երկրում։ Դա մեծագույն գիտական կանխատեսում էր, որի ճշմարտությունն ապացուցվեց մարդկության հետագա պատմական զարգացման ընթացքում։

Տեսականորեն ընդհանրացնելով վերջին դարի սոցիալական հեղափոխությունների, հատկապես 1871 թ. Փարիզի կոմունիայի և 1905—1907 թթ. ռուսական բուրժուադեմոկրատական հեղափոխության փորձը, Լենինը մշակեց բուրժուադեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու տեսությունը, ինչպես և հեղափոխության մեջ պրոլետարիատի դաշնակիցների հարցը՝ բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքի տեսությունը։

Նշանակալից է Լենինի ներդրումը մարքսիստական փիլիսոփայության մեջ։ Լենինը մեր ժամանակի խոշորագույն փիլիսոփա-մտածողն էր։ Իր բազ-

մաթիվ գրքերի ու հոդվածների և մասնավորապես փիլիսոփայության հարցերին նվիրված «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» ու «Փիլիսոփայական տետրեր» հանրահռչակ աշխատություններում Լենինը մի նոր աստիճանի հասցրեց շրջապատող աշխարհի փիլիսոփայական ընդհանրացումը, մի շարք նոր հարցադրումներով ու հիմնադրույթներով հարստացրեց ժամանակակից գիտական փիլիսոփայությունը՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը։ Լենինը ոչ թե սոսկ նոր երանգներ մտցրեց մատերիալիզմի տեսության, դիալեկտիկական մեթոդի և հատկապես. իմացության պրոցեսի դիալեկտիկա-մատերիալիստական ըմբռնման մեջ, այլ, ընդհանրացնելով իր ժամանակի գիտության նորագույն տվյալները, մշակեց զգայությունների բնույթի, ճշմարտության, իմացության մեջ պրակտիկայի կուռ ուսմունքը, որը հաճախ անվանվում է «լենինյան արտացոլման տեսություն»։ Ընդհանրացնելով XIX դարի վերջի և XX դարի սկզբի բնագիտության, հատկապես ֆիզիկայի դարակազմիկ հայտնագործությունները, բացահայտելով այսպես կոչված «ֆիզիկական» իդեալիզմի իմացաբանական արմատները և ցույց տալով բնագիտության ճգնաժամից դուրս գալու ելքը, Լենինն անգնահատելի ծառայություն մատուցեց արդի բնագիտությանը։

Իր փիլիսոփայական հետազոտություններով Լենինն ավելի հզորացրեց բնության և հասարակության երևույթների տեսական ըմբռնման ու բացատրության հատու զենքը՝ մատերիալիստական դիալեկտիկան և ավելի կուռ դարձրեց կապիտալիզմի կործանման ու կոմունիստական հասարակարգի հաստատման անխուսափելիության տեսական հիմնավորումը։

Պատմական վիթխարի նշանակություն ունի Լենինի ավանդը կոմունիզմի համար մղվող պայքարի առաջատար ու զսկավար ուժի՝ նոր տիպի կոմունիստական կուսակցության կազմակերպման տեսական հիմնավորման մեջ։ Լենինը ամբողջ խորությամբ մշակեց կոմունիստական շարժման ոչ միայն ստրատեգիան, այլև նրա տակտիկան բուրժուա-դեմոկրատական և սոցիալիստական հեղափոխությունների ժամանակ, աներեր ու արդյունավետ պայքար ծավալեց բանվորական շարժումը մարքսիզմի էությունն աղավաղող օպորտունիզմից, ռևիզիոնիզմից ու դոգմատիզմից մաքրելու համար։ Նա արմատական քննադատության ենթարկեց նարոդնիկությունը, այսպես կոչված «լեգալ մարքսիզմը», էկոնոմիզմը, ռեֆորմիզմն ու ռևիզիոնիզմը, ամբողջ խորությամբ բացահայտելով նրանց առաջ քաշած դրույթների տեսական լիակատար սնանկությունը։ Ընդ որում, Լենինը երբեք չէր բավարարվում զուտ բացասական քննադատությամբ, այլ մարքսիզմն աղավաղողների սխալների պարզաբանումն օգտագործում էր մարքսիստական տեսության հետագա խորացման ու հարստացման համար։ «Ի՞նչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք պայքարում սոցիալ-դեմոկրատների դեմ», «Մարքսիզմը և ռևիզիոնիզմը», «Պրոլետարական հեղափոխությունը և renեգատ Կաուցկին», «Ձախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» և նրա տասնյակ այլ աշխատություններ ստեղծագործական մարքսիզմի փայլուն օրինակներ են։

Առանձնահատուկ կարևորություն ունի Լենինի կողմից հասարակության սոցիալիստական վերափոխման պրոցեսների գիտական հետազոտությունը։ Մարքսի ու Էնգելսի հիմնադրույթները հարստացնելով կապիտալիզմից սոցիալիզմին անմիջական անցման ժամանակաշրջանի տնտեսական ու քաղաքական զարգացման ընդհանրացմամբ, Լենինը մի շարք հանճարեղ գիտական

կանխատեսումներ արեց հասարակության ապագա քաղաքական-պետական կազմակերպության և նրա մահացման ուղիների մասին։ Դրա համար նա հանգամանորեն հետազոտեց հարցի ամբողջ պատմությունը և, իմաստավորելով բանվոր դասակարգի ազատագրական պայքարի հարյուրամյա փորձը, գրեց իր հռչակավոր «Պետություն և հեղափոխություն» աշխատությունը։

* * *

Հասարակության սոցիալիստական վերափոխման հարցերի մեջ Լենինը հատուկ ուշադրություն է դարձրել ազգերի փոխհարաբերության հարցին։ Իր ամբողջ գործունեության ընթացքում Լենինը բազմիցս անդրադարձել է ազգային հարցին, քննարկելով այն ոչ միայն որպես գիտնական սոցիոլոգ, այլ նաև որպես քաղաքագետ ու հեղափոխական գործիչ, ամեն անգամ բացահայտելով հարցի նոր ու նոր կողմեր։ Զարգացնելով Մարքսի և Էնգելսի առաջադրած հիմնադրույթները և խորապես ուսումնասիրելով ազգային հարաբերությունների զարգացումն իմպերիալիզմի դարաշրջանում, նա մշակեց ազգային հարցի մարքսիստական-լենինյան կուռ տեսությունը և նրա լուծման կոմունիստական գործուն ծրագիրը որպես կոմունիստական կուսակցության ծրագրի բաղկացուցիչ մասը։ Նա մշակեց կուսակցության ազգային քաղաքականության հիմնական դրույթները, քաղաքականություն, որն արդարացիորեն կոչվում է «Լենինյան ազգային քաղաքականություն» և ստեղծագործական մարքսիզմի խոշորագույն նվաճումներից մեկն է։

Ահա այսպիսին է, համառոտակի գծերով, մեծ Լենինի, համաշխարհային պատմության նոր տիպի գործչի կերպարը։ Մի գործիչ, որն իր արտասովոր ընդունակությունների, անհատնում եռանդի և անշեղ նպատակադրության շնորհիվ կարողացավ արտահայտել նորագույն պատմության աշխարհակերտ ուժի՝ արդյունաբերական բանվոր դասակարգի ձգտումներն ու կամքը, նրա համաշխարհային-պատմական առաքելությունը, մի անձի մեջ միավորել աշխատավոր զանգվածների ազատագրական պայքարի խիզախ առաջնորդին, նրա գիտական տեսության հանճարեղ մշակողին, դառնալ հեղափոխական մտքի ու գործողության անօրինակ մարմնացում։

Նա իսկապես մեր դարի մեծագույն գործիչն էր, որը վերլուծելով ներկան, չտեսնված խորաթափանցությամբ կարողանում էր տեսնել մարդկության զարգացման ապագա ընթացքը։ Ինչպես իրավացիորեն գրել է հայ մեծ բանաստեղծ Չարենցը՝

> Նրա հայացքը տեսնում էր պարզ
> Գալիք օրերը ու դարերը,
> Նրա խոյանքը հանճարեղ էր,
> Նրա թռիչքը — չտեսնված:

Մարքսիզմ-լենինիզմի էական կողմերից մեկը նրա հետևողական ինտերնացիոնալիստական բնույթն է։

Լենինիզմը՝ որպես մարքսիզմի նոր աստիճան, աճեց համառուսական պրոլետարական շարժման հողի վրա։ Սակայն սխալ կլիներ այդ բանի հիման վրա լենինիզմը համարել զուտ ռուսական երևույթ, ինչպես այդ փորձում են «ապացուցել» մարքսիզմն աղճատող հոսանքները։ Այնպես, ինչպես գերմանական, ֆրանսիական և անգլիական բանվոր դասակարգի ազատագրական պայքարի հողի վրա ծագելով մարքսիզմն անխուսափելիորեն վերածվեց մի-

ցազգային երևույթի, դարձավ բոլոր ազգերի ու ազգությունների բանվորների ինտերնացիոնալ ուսմունքը, այնպես էլ և լենինիզմը՝ ծագելով համառուսական շարժման հողի վրա, իր մեջ ամփոփեց պրոլետարական միջազգային շարժման հիմնական կողմերը և վերածվեց միջազգային երևույթի։

Ինտերնացիոնալիզմը մարքսիզմ-լենինիզմի մեջ ոչ թե պատահական, դրսից ներմուծված բան է, այլ նրա բուն էության արտահայտությունը, նրա անքակտելի կենսական բաղկացուցիչ տարրը։ Իր ծագման առաջին իսկ պահից մարքսիզմն առաջադրեց բոլոր երկրների բանվորների համերաշխության սկզբունքը՝ որպես արտադրության միջոցների մասնավոր սեփականության, մարդու կողմից մարդու շահագործման վերացման, բանվոր դասակարգի ազատագրական պայքարի հաղթանակի կարևորագույն պայման։ Իր ժամանակին Կարլ Մարքսը նշում էր, որ կապիտալիզմի դարաշրջանում ճնշված ազգերի ազատագրությունը կախման մեջ է դրվում պրոլետարիատի ազատագրությունից։ «Ո՛չ հունգարը, ո՛չ լեհը, ո՛չ էլ իտալացին ազատ չեն լինի, քանի դեռ բանվորը ստրուկ է մնում» — նշում էր նա։ Կապիտալիզմի լիակատար կործանումը բոլոր երկրների, բոլոր ազգերի բանվորների միացյալ պայքարի արդյունքն է, դրա համար էլ, ինչպես «Կոմունիստական պարտիայի մանիֆեստ»-ի մեջ նշում էին Մարքսն ու Էնգելսը՝ «Գոնե քաղաքակիրթ երկրների ջանքերի միացումը պրոլետարիատի ազատագրման պայմաններից մեկն է»[1]։ Եվ Մարքսն ու Էնգելսը առաջադրեցին «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» համաշխարհային-պատմական լոզունգը՝ որպես հետևողական պրոլետարական ինտերնացիոնալիզմի անկյունաքար։

Մարքսը և Էնգելսը հենց սկզբից հիմնովին հերքեցին կոմունիզմի հակառակորդների այն չարամիտ հերյուրանքը, թե կոմունիստներն իբր ուզում են վերացնել հայրենիքը, վերացնել ազգությունը։ «Բանվորները հայրենիք չունեն։ Նրանցից չի կարելի խլել այն, ինչ նրանք չունեն» — նշում էին Մարքսն ու Էնգելսը և բացատրում, որ դա չի նշանակում թե պրոլետարիատն ապազգային է, այլ այն, որ նա անխնա շահագործվում է և՛ իր ազգային, և՛ օտարազգի կապիտալիստների կողմից։ Կոմունիզմը ոչ թե ազգն ու ազգությունն է վերացնում, այլ ազգային կզգիացածությունն ու ազգերի հակադրությունը միմյանց։ Կոմունիզմի ժամանակ ազգությունները չեն վերանում, այլ «ինչ չափով որ ոչնչացվելու է մի անհատի շահագործումը մյուսի կողմից, այն չափով էլ ոչնչացվելու է մի ազգի շահագործումը մյուսի կողմից։ Ազգերի ներսում եղած դասակարգերի անտագոնիզմի հետ միասին կվերանան նաև թշնամական հարաբերությունները ազգերի միջև»[2]։

Այսպիսով, մարքսիզմի հիմնադիրները՝ կոմունիստական հասարակության հաստատման կարևորագույն պայմաններից մեկն էին համարում ոչ թե ազգերի ու ազգությունների վերացումը, այլ ազգային մեկուսացման, կզգիացման ու թշնամանքի անհետացումը, ազգային ճնշման ու ազգերի հակադրության վերացումը և իրավահավասար աշխատավորական ազգերի տնտեսական ու քաղաքական կյանքի միասնության, նրանց կամավոր միության հաստատումը։

Այս սկզբունքները հիմնաքար դարձան Լենինի ամբողջ գործունեության ու պայքարի համար։

1 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր երկու հատորում, հատ. I, էջ 34։
2 Նույն տեղում։

Իր հեղափոխական գործունեության հենց սկզբից Լենինն առանձնահատուկ ուշադրություն դարձրեց բանվոր դասակարգի ազատագրական պայքարում ազգային և միջազգային մոմենտների փոխհարաբերության հարցին։ Ազգերի լիակատար իրավահավասարություն, ազգերի ինքնորոշման՝ ընդհուպ մինչև անջատման և ինքնուրույն պետություն կազմելու իրավունքի ճանաչում, ազգային սահմանափակությունների ու արտոնությունների վերացում, ազգային լեզուների ու մշակույթի զարգացման ապահովում և, դրա հետ միասին, կապիտալիզմի տապալման ու կոմունիզմի կառուցման համար բոլոր ազգերի ու ազգությունների պրոլետարների ուժերի համախմբում, նրանց միավորում մեկ ինտերնացիոնալիստական միասնական կուսակցության մեջ, — լենինյան այս դրույթներն իրենց արտացոլումը գտան համառուսական կոմունիստական կուսակցության առաջին ծրագրում, որը վիթխարի դեր խաղաց ցարիզմի ու կապիտալիզմի դեմ մղվող պայքարում ռուսական կայսրության բոլոր ազգերի ու ազգությունների առաջավոր բանվորների ինտերնացիոնալ համախմբման գործում։ Արդեն իսկ 1905—1907 թթ. հեղափոխության ժամանակ ցարական կառավարությունն ու բուրժուազիան զգացին այդ ինտերնացիոնալ համախմբման անխորտակելի ուժը և հեղափոխության պարտությունից հետո ճիգ ու ջանք չխնայեցին այն ջլատելու համար։ Նրանց հրահրած վելիկոռուսական շովինիզմը, որն ուղեկցվում էր մյուս ազգերի նացիոնալիզմի բորբոքումով, նպաստակ ուներ իրար հակադրել տարբեր ազգերի բանվորներին, թուլացնել նրանց միասնությունը։ Իմպերիալիստական պատերազմի նախապատրաստությունը միջազգային մասշտաբով ավելի պարարտ հող էր ստեղծում շովինիստական մոլուցքի սանձազերծման և բանվորական շարժման մեջ սոցիալ-շովինիստական տրամադրությունների թափանցման համար։ Այս պայմաններում օպորտունիզմի ճահիճն ընկած սոցիալ-դեմոկրատները, հատկապես կովկասյան մենշևիկները, բունդականները ու լիկվիդատորները, հեռացան պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներից և ծավալուն հարձակում սկսեցին ազգային հարցում կուսակցության ծրագրի հիմնական դրույթների դեմ։

Ինչպես ժամանակին նշում էր Լենինը, դա պրոլետարական ինտերնացիոնալիզմը մեծապետական շովինիզմով ու նացիոնալիզմով փոխարինելու անարգ փորձ էր, որն անպատասխան թողնել չէր կարելի։ Եվ այդ պատասխանը տվեց հենց Լենինը՝ 1913—1916 թթ. լույս տեսած իր «Քննադատական դիտողություններ ազգային հարցի շուրջը», «Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին», «Վելիկոռուսների ազգային հպարտության մասին», «Սոցիալիստական հեղափոխությունը և ազգերի ինքնորոշման իրավունքը», «Ինքնորոշման վերաբերյալ դիսկուսիայի արդյունքները», «Մարքսիզմի ծաղրանկարի և «իմպերիալիստական էկոնոմիզմ»-ի մասին» և այլ աշխատություններում։

Լենինը որոշակիորեն ընդգծում էր, որ մարքսիստ չէ, անգամ դեմոկրատ չէ նա, ով չի ընդունում ազգերի ու ազգային լեզուների իրավահավասարությունը, ով չի պայքարում ամեն մի ազգային ճնշման կամ անիրավահավասարության դեմ։ Բայց մարքսիստ չէ նաև նա, ով ժխտում է ազգերի մերձեցումը, ժխտում է բոլոր ազգերի ու ազգությունների բանվորների ինտերնացիոնալ համախմբման, միասնական կազմակերպությունների մեջ նրանց միավորելու սկզբունքը։ Մարքսիստը պետք է կարողանա ճշգրիտ հաշվի առնել ազգային հարցում կապիտալիզմի երկու հակայիր տենդենցների գործո-

գությունը, յուրաքանչյուր ազգի զարգացման կոնկրետ աստիճանը և տուրք չտա ազգերի պառակտման ու մեկուսացման որևէ փորձի. ո՛չ շովինիզմին, և ո՛չ էլ նացիոնալիզմին։ «Ով կամենում է ծառայել պրոլետարիատին, — գրում էր Լենինը, — նա պետք է միավորի բոլոր ազգերի բանվորներին, անշեղորեն պայքարելով թե «իր» և թե օտար նացիոնալիզմի դեմ»[3]։

Օպորտունիստները հարձակվում էին մասնավորապես կուսակցության ծրագրի՝ ազգային ինքնորոշման իրավունքը հռչակող 9-րդ պարագրաֆի վրա։ Լենինը հետևողականորեն բացահայտեց օպորտունիստների սխալները և տվեց հարցի համակողմանի դիալեկտիկական քննարկման փայլուն օրինակ։ Վերլուծելով կապիտալիզմի դարաշրջանում ազգերի զարգացման պրոցեսը և բացահայտելով այդ պրոցեսի սոցիալ-տնտեսական հիմքերը, Լենինը ցույց տվեց, որ ամբողջ աշխարհում ֆեոդալիզմի դեմ կապիտալիզմի տարած վերջնական հաղթանակը կապված է ազգային շարժումների հետ։ «Այդ շարժումների տնտեսական հիմքն այն է, — նշում էր նա, — որ ապրանքային արտադրության կատարյալ հաղթանակի համար անհրաժեշտ է, որ բուրժուազիան նվաճի ներքին շուկան, անհրաժեշտ է պետական համախմբում այն տերիտորիաների, որոնց բնակչությունը խոսում է միևնույն լեզվով, վերացնելով այդ լեզվի զարգացման և գրականության մեջ այն ամրացնելու դեմ եղած բոլոր արգելքները»[4]։

Լենինը շեշտում էր, որ ազգային ինքնորոշման իրավունքը բխում է ոչ միայն բազմազգ պետության մեջ ճնշված կամ գաղութային լծի տակ գտնվող բոլոր ժողովուրդների, այլև հենց իշխող ազգերի պրոլետարիատի արմատական շահերից։ Ազատագրելով ճնշված ազգությունը, տիրապետող ազգի պրոլետարիատն ինքն էլ է ազատագրվում։ Եվ Լենինը հաճախ էր կրկնում Մարքսի հանճարեղ միտքը. «չի կարող ազատ լինել մի ժողովուրդ, որը ճնշում է մյուս ժողովուրդներին»։ Ուրեմն, պրոլետարիատը պետք է անվերապահորեն ընդունի բոլոր ազգերի ինքնորոշման իրավունքը, պայքարի ամեն տեսակ պետական-ազգային արտոնությունների և սահմանափակումների դեմ, պաշտպանի բոլոր ազգերի հավասար իրավունքը ոչ թե սոսկ ազգային լեզվի ու մշակույթի զարգացման հարցում, այլ կյանքի բոլոր բնագավառներում։

Ճնշված ազգի ազգային-ազատագրական շարժման մեջ, ինչպես նշում էր մեծ առաջնորդը, կա համադեմոկրատական բովանդակություն։ Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, թե պրոլետարիատը պետք է պաշտպանի անխտիր բոլոր ազգային շարժումները։ Նա պաշտպանում է միայն այն շարժումները, որոնք ուղղված են ազգային ու սոցիալական ճնշման, իմպերիալիզմի դեմ։ Նրա նպատակը բոլոր ազգերի աշխատավորների ազատագրումն է շահագործումից ու ազգային ճնշումից, և հենց դրա համար էլ, ինչպես նշում էր Լենինը՝ «բանվոր դասակարգի և կապիտալի դեմ նրա մղած պայքարի շահերը պահանջում են բոլոր ազգերի բանվորների լիակատար համերաշխություն և ամենասերտ միասնություն, պահանջում են հակահարված տալ անխտիր բոլոր ազգությունների բուրժուազիայի նացիոնալիստական քաղաքականությանը»[5]։

---

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 11։
4 Նույն տեղում, էջ 493։
5 Նույն տեղում, էջ 528—529։

Լենինը ցույց տվեց, որ ազգերի ինքնորոշման իրավունքի ժխտումը, նրա նենգափոխումը նացիոնալ-լիբերալ ֆրազներով, «կուլտուր-ազգային» ավտոնոմիայի պահանջով, իրականում հրաժարումն է «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» լոզունգից, ամոթալի զիջում մեծապետական շովինիզմին ու բուրժուական նացիոնալիզմին։ «Ազգերի լիակատար իրավահավասարություն, ազգերի ինքնորոշման իրավունք, բոլոր ազգերի բանվորների միաձուլում, — ազգային այս ծրագիրն է ուսուցանում բանվորներին մարքսիզմը, ուսուցանում ամբողջ աշխարհի փորձը և Ռուսաստանի փորձը»[6], — գրում էր Լենինը։

Բանվորների ինտերնացիոնալ համախմբումը, նրանց միաձուլումը պայքարի մեջ. ուսուցանում էր Լենինը, ամենևին էլ չի նշանակում հրաժարում ազգային պատկանելիությունից. լեզվից ու մշակույթից, չի նշանակում ազգային շահերի ու առանձնահատկությունների քամահրում ու մերժում, այլ նշանակում է այդ շահերի խելացի զուգակցում ընդհանուր պրոլետարական պայքարի շահերի հետ։ Կոմունիստներին խորթ չէ ազգային հպարտության առողջ զգացմունքը։ Բայց դա ամենևին էլ հպարտություն չէ մյուս ազգերին նվաստելու ու ճնշելու, կոտորածների ու թալանի համար, ազգային մշակույթի ռեակցիոն ու հետադիմական կողմի համար, թագավորների ու իշխանների անհամար չարագործությունների համար, այլ օրինական հպարտություն մարդկության առաջադիմական, դեմոկրատական մշակույթի մեջ և աշխատավորների ազատագրության համար մղվող պայքարում իր ազգի ներկայացուցիչների մուծած ավանդի համար։ «Եվ մենք, վելիկոռուսական բանվորներս, — գրում էր Լենինը, — ազգային հպարտության զգացմունքով լի, կամենում ենք, ինչ գնով էլ լինի, ունենալ ազատ ու անկախ, ինքնուրույն, դեմոկրատական, ռեսպուբլիկական հպարտ Վելիկոռուսիա, որը հարևանների նկատմամբ իր հարաբերությունները կառուցի հավասարության մարդկային սկզբունքի վրա և ոչ թե ուժ ազդը ստորացնող արտոնությունների ճորտատիրական սկզբունքի վրա»[7].

Խոսելով ազգերի ինքնորոշման սկզբունքի մասին, Լենինը միշտ նշում էր, որ կոմունիստների նպատակը ազգերի անջատումը, նրանց մեկուսացումը չէ, այլ նրանց միավորումը մեկ եղբայրական ընտանիքի մեջ։ Ինքնորոշումն ոչ թե հանուն անջատման, այլ ինքնորոշում՝ հանուն միավորման, այսինքն՝ բռնի, ստիպողական միավորման փոխարեն ժողովուրդների կամավոր միավորում մեկ միասնական սոցիալ-քաղաքական օրգանիզմի մեջ, շեշտում էր Լենինը։ «Մենք ուզում ենք ազատ միացում, — գրում էր նա, — և այդ պատճառով էլ պարտավոր ենք ճանաչել անջատման ազատություն (առանց անջատման ազատության՝ միացումը չի կարող ազատ կոչվել)»[8]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո այդ կամավոր միավորումը դարձավ իրականություն։ Լենինի այդ շրջանի գործունեության ու երկերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, թե ինչ կրքոտությամբ էր նա պայքարում սոցիալիստական ուղու վրա կանգնած ժողովուրդների կամավոր միավորումն ու նրանց միջև իսկական բարեկամական, եղբայրական հարաբերություններ ստեղծելու համար, ինչ հոգատարությամբ էր նա վերա-

6 Նույն տեղում, էջ 569։
7 Նույն տեղում, հատ. 21, էջ 120։
8 Նույն տեղում, հատ. 26, էջ 207։

բերվում նույնիսկ ամենափոքր ազգության շահերին։ 1922 թ. «Օրսերվեր»-ի և «Մանչեստր գարդիան»-ի թղթակից Ֆարրմանի հետ հարցազրույցում Լենինը, ի մի բերելով ազգային հարցի լուծման ասպարեզում սովետական իշխանության հնգամյա փորձը, մասնավորապես նշում էր. «Մեր փորձը մեզ անխորտակելի համոզմունք է ստեղծել, որ տարբեր ազգերի շահերի նկատմամբ հսկայական ուշադրությունն է միայն, որ վերացնում է կոնֆլիկտների հողը, վերացնում է փոխադարձ անվստահությունը, վերացնում է ամեն տեսակի ինտրիգների երկյուղը, ստեղծում է, մանավանդ տարբեր լեզուներով խոսող բանվորների և գյուղացիների, այն վստահությունը, առանց որի բացարձակապես անհնարին են թե՛ ժողովուրդների խաղաղ հարաբերությունները և թե՛ փոքրիշատե հաջող զարգացումն այն ամենի, ինչ արժեքավոր է արդի քաղաքակրթության մեջ»[9]։

Ժողովուրդների խաղաղ հարաբերությունների, ավելին՝ նրանց բարեկամության ապահովման առաջին պայմանը, ինչպես նշում էր Լենինը, նրանց իրավահավասարության ապահովումն է։ Այդ տեսակետից բնորոշ է Լենինի անհաշտ պայքարը «ավտոնոմիզացիայի» տխրահռչակ տեսության դեմ, որը ՍՍՌՄ կազմակերպման նախօրյակին առաջ էր քաշում Ստալինը։ «Ավտոնոմիզացիայի» տեսության համաձայն այն ժամանակ (1922 թ.) գոյություն ունեցող անկախ սովետական սոցիալիստական հանրապետությունները (Ուկրաինան, Բելոռուսիան, Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը) պետք է մտնեին Ռուսաստանյան ֆեդերացիայի կազմում որպես ինքնավար հանրապետություններ։ Ազգերի իրավունքները խիստ սահմանափակող այդ տեսությանը Լենինը հակադրեց անկախ սովետական հանրապետությունների միավորումը՝ որպես մեկ միության իրավահավասար անդամներ։ Եվ Լենինի վիթխարի ջանքերի շնորհիվ էր, որ ստեղծվեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը՝ որպես իրավահավասար ազգերի կամավոր դաշինք։

Ժողովուրդների իրական հավասարության հաստատման և նրանց բարեկամության ամրապնդման մյուս կարևոր պայմանը Լենինը համարում էր ժողովուրդների փաստական՝ տնտեսական, քաղաքական և կուլտուրական հավասարության ստեղծումը։ Կապիտալիզմի թողած ժառանգությունը ազգերի փաստական անհավասարությունն է՝ մի բուռն զարգացած ազգերի կողքին հարյուրավոր այլ ազգերի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի հետամնացությունը։ Այդ ամոթալի ժառանգությունը լիովին հաղթահարելու, ժողովուրդների եղբայրության կուռ հիմք ստեղծելու համար Լենինը առաջադրեց զարգացած սոցիալիստական ազգերի կողմից մյուս ազգերին օգնելու, նրանց ավելի արագ զարգացնելու և ամենաառաջավորների մակարդակին հասցնելու խնդիրը, որն իր արտահայտությունը գտավ կուսակցության XII համագումարի հատուկ որոշման մեջ և սոցիալիզմի կառուցման ընթացքում վերածվեց իրականության։ Դրա շնորհիվ այժմ մեր երկրում այլևս չկան առաջադեմ և հետամնաց ազգեր ու ազգություններ՝ նրանք բոլորն արդեն կանգնած են համարյա միատեսակ բարձր աստիճանի վրա և քայլում են աշխարհի բոլոր ժողովուրդների ավանգարդում։

---

9 սույն տեղում, հատ. 33, էջ 457։

Փաստական հավասարության հաստատումն առանձնապես ցայտուն է ձևով տգգային, բովանդակությամբ սոցիալիստական մշակույթի զարգացման ու ծաղկման բնագավառում։ Խելացիորեն օգտագործելով իրենց դարավոր մշակույթի բոլոր առաջադիմական տարրերը և սոցիալիստական տնտեսական ու քաղաքական բուռն զարգացման նվաճումները, մեր երկրի ժողովուրդների հոգևոր մշակույթը, նոր, բարձրագույն աստիճանի է հասել և օրինական ճանաչում է գտել ամբողջ աշխարհում։

Իսկապես հավասար սոցիալիստական ազգերի ու ազգությունների անբակտելի բարեկամությունն սովետական հասարակության ուժի և հզորության անսպառ աղբյուրներից մեկն է։ Եվ դա այժմ կամա թե ակամա ստիպված են խոստովանել նույնիսկ կոմունիզմի երդվյալ թշնամիները։

Վերլուծելով համաշխարհային զարգացման ընդհանուր տենդենցը, Լենինը կանխատեսեց, որ բոլոր ազգերը կգան դեպի կոմունիզմ, — դա անխուսափելի է։ Սակայն Լենինը զգուշացնում էր, որ սխալ կլիներ կոմունիզմը պատկերացնել որպես զորշ, միակերպ մի ինչ-որ բան, ուր ոչ մի տարբերություն չի լինի երկրների միջև։ Կոմունիզմն օրգանապես զուգակցում է ազգայինն ու միջազգայինը. ընդհանուրը, զարգացման հիմնական օրինաչափությունները բոլոր երկրներում նույնը կլինեն, սակայն առանձին երկրները կտարբերվեն նրա իրականացման այս կամ այն երանգներով, այս կամ այն յուրօրինակությունը կմտցնեն նրա կոնկրետ ձևերում, նրա իրականացման տեմպերի ու կոնկրետ եղանակների մեջ։

Այսօր այդ հանճարեղ կանխատեսումն արդեն իրականություն է դառնում։ Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը միավորում է աշխարհի տարբեր մասերի 14 երկրների՝ աշխարհի բնակչության մեկ երրորդը։ Սոցիալիզմի սիստեմում ընդգրկված մոտ 200 ազգը ու ազգություններ կառուցում են նոր, անդասակարգ հասարակարգ։ Եվ, չնայած նրանց միջև եղած տարբերություններին, նրանք միավորված են ընդհանուր նպատակներով, ընդհանուր շահերով և հարթում են մարդկության ապագայի ուղին։

Լենինը նշում էր, որ ազգային տարբերությունները սոցիալիզմի նույնիսկ համաշխարհային մասշտաբով «իրագործվելուց հետո էլ կպահպանվեն շատ ու շատ երկար ժամանակ» և դա կլինի նրանց չտեսնված զարգացման, ծաղկման ու մերձեցման ժամանակաշրջանը։ Դրանով իսկ Լենինը բացահայտեց սոցիալիզմի պայմաններում ազգերի զարգացման հիմնական օրինաչափությունը՝ նրանց զարգացման ու մերձեցման պրոցեսների միասնությունը։

Սովետական Միության Կոմունիստական կուսակցության նոր Ծրագիրը, գծելով մեր երկրում սոցիալիզմից կոմունիզմին անցման կոնկրետ ուղիները, բացահայտում է նաև ազգերի և ազգային հարաբերությունների հետագա զարգացման հիմնական կողմերը՝ նրանց տնտեսական, քաղաքական, մշակութային կյանքի, ազգային լեզուների հետագա բուռն զարգացումը և կանխատեսում, որ «ՍՍՌՄ-ում կոմունիզմի հաղթանակի շնորհիվ տեղի կունենա ազգերի է՛լ ավելի մերձեցում, կաճի նրանց տնտեսական ու գաղափարական ընդհանրությունը։ Սակայն ազգային տարբերությունների, հատկապես լեզվական տարբերությունների ջնջվելը, զգալիորեն ավելի տևական պրոցես է, քան դասակարգային սահմանագծերի ջնջվելը»[10]։

---

10 ՍՄԿՊ Ծրագիրը, էջ 37։

Լենինյան խորաթափանց կանխատեսումների և Սովետական Միության ազգերի զարգացման համարյա կեսդարյա փորձի ընդհանրացման վրա հիմնված այս Ծրագիրը լենինյան ազգային ծրագրի հետագա զարգացումն է մեր ժամանակաշրջանի պայմաններում։

Կոմունիզմն օրըստօրե ավելի ու ավելի խիստ կենսական անհրաժեշտություն է դառնում աշխարհի բոլոր ժողովուրդների համար։ Իր վերջնական հոգևարքն է ապրում իմպերիալիզմի անմարդկային դաղութային սիստեմը։ Դարավոր էնշման լծից ազատագրվող տասնյակ ժողովուրդներ փորձում են նոր, ինքնուրույն կյանք կառուցել, նրանցից շատերը ձգտում են հաղթահարել կապիտալիստական զարգացման ուղին և կանգնել սոցիալիզմի ուղու վրա։ Եվ այդ գործում նրանց լավագույն ուղեցույցը ժողովուրդների լիակատար հավասարության, նրանց սոցիալիստական համագործակցության լենինյան գաղափարներն են։

ЛЕНИНСКОЕ УЧЕНИЕ О ДРУЖБЕ НАРОДОВ

М. А. МЕЛИКЯН

(Резюме)

Принцип интернационального единства трудящихся всех стран и полного равенства всех наций и национальностей — один из основополагающих принципов марксистского учения.

Творчески развивая марксизм применительно к современной исторической эпохе, В. И. Ленин разработал стройную национальную программу коммунистической партии, раскрыл основные стороны соотношения национального и интернационального моментов в борьбе пролетариата за ликвидацию эксплуататорского строя и построение коммунизма.

Особое внимание В. И. Ленин уделял обоснованию права народов на самоопределение, рассматривая его как признание полного равенства народов, осуществление которого создает прочные основы для добровольного братского объединения народов, освобожденных от ига капитала.

Научно проанализировав тенденции развития мировой истории, В. И. Ленин предвидел основные пути развития наций и национальных отношений в коммунистическом обществе.

Свободное развитие народов СССР, их братская, нерушимая дружба и сближение, день ото дня крепнущее единство народов мировой системы социализма — живое воплощение бессмертных идей гениального мыслителя и великого революционера.